

# ՑՈՒՑԱԿ
# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

## № 666
## ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 2:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ 35.7×22.5 սմ.:— Նյութը՝ դեղնավուն դիմացկուն մաքուր թուղթ:— Կազմ՝ չունի:— Պահպանակ՝ չունի:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ 1ր—2ր:— Տողերը՝ 20:— Գծումներ՝ չունի:— Գիրը՝ շեղագիր:— Զարդագրություն՝ չունի:— Վերնագիրը չորս տող տպված է կարմիր թանաքով («Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի...»): Կոնդակի վերևի նասում կա Խրիմյան Հայրիկի տպագիր կարմիր կնիքը, 2.8×2.6 սմ. չափերով: Վերևի մասում նկարված է կես արեգակը իր հառագայթներով, որի մեջ նստած է մի գառնուկ, փորրիկ մի դրոշ բռնած: Այս նկարի տակ նինգ տողի վրա գրված է Հայրապետի անունն ու օծման թվականը. «Մկրտիչ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամ Հայոց, ՌՅԽԲ—1893»:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ Մկրտիչ Ա. Խրիմյան, Կաթողիկոս Ամենայն Հայոց (1892—1907 թթ.):— Ժամանակը՝ 17 հունվարի 1895 թ.:— Վայրը՝ Թիֆլիս (Վրաստան):— Ծանոթագրություն՝ ձեռագիր կոնդակը ցուցադրված է հին Վենարանի Կաթողիկոսական թանգարանում:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Մկրտիչ Ծառայ Յիսուսի Քրիստոսի (չորս տող տպագիր, ապա մնացածը ձեռագիր է):

Թեմական Առաջնորդին Հայոց Վրաստանի և Իթերէթի Գերապատիվ Տ. Գէորգ սրբազան Արքեպիսկոպոսի հարազատի Մայր Աթոռոյ ողջոյն և Հայրապետական օրհնութիւն:

Բազմաժամանակեայ հաւատարիմ և անձնուէր ծառայութիւն Քո առ Մայր Աթոռն Հայաստանեայց և առ սուրբ Եկեղեցին, որում կարգեալ ես տեսուչ և հովիւ բանաւոր Հօտին Քրիստոսի, արժանացեալ շնորհաց երջանկայիշատակ նախորդաց մերոց, արժանի համարին զՔեզ մեծագոյն իմն շնորհաց, վասնորոյ յաւուր տօնի Սնունդակոչութեան Մերոյ շնորհեալ Քեզ զպատիվ Արքեպիսկոպոսութեան, այսու Հայրապետական կոնդակս Մերով զնոյն հաստատեմք:

Մաղթեմք առ Ամենակարողն Հոգին Աստուած ևս առաւել զօրացուցանել զՔեզ ի մաշտամանդ, որով կարող լիցիս ծրաջան և շրջահայեաց գործունէութեամբ ե հաւատարմութեամբ ևս քան չևս յաջողիլ յասպարիզի Ազգային և Եկեղեցական գործունէութեան:

Ողջ լեր և օրհնեալ յերկնաւոր Հօրէն և ի Մէնջ: Ամէն:

ի յ17 յունուարի 1895 ամի
և ի թուարեր. Հայոց ՌՅԽԴ
Հմր. 57
ի ք. Տփխիս:

(ստորագրութիւն)
Մկրտիչ Կթղկս. Ամ. Հայոց:

## № 667
## ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 1:— Մեծությունը՝ 42.8×34.1 սմ.:— Նյութը՝ դեղնած և կեղտոտած թուղթ:— Կազմ՝ չունի:— Պահպանակներ՝ չունի: Վիճակը՝ բավարար, սակայն տեղ-տեղ վնասված է:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ 1ր:— Տողերը՝ 51:— Գծումները՝ ճնշումով:— Գիրը՝ նոտրգիր:— Զարդագրություն՝ կան երեք թոչնագրեր (Է, Ց, Ի) 4—7 սմ. չափերով: ՑԻ-ի տառերի վրայի պատվո նշանն էլ մի աղավնի է, 6 սմ. երկարությամբ: «Կաթողիկոս» բառի վրա նկարված է մի գմբեթ և խաչ, 5 սմ. բարձրությամբ: Այս բոլորը, ինչպես նաև ձեռագրի առաջին երկու տողերը և տեքստում երկու հատուկ անուն (Ամբակում և Սահակ) գրված են

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1988 թվականի № № Ե—Զ-ից:

կարմիր թանաքով:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ Աղվանից Իսրայել հակաթոռ կաթողիկոս (18-րդ դար):— Ծաղկողը՝ անհայտ:— Ժամանակը՝ 13 հունվարի 1764 թ.:— Վայրը՝ շատ հավանաբար Գանձասարի վանք (Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան):— Ծանոթագրություն՝ ձեռագիր կոնդակը ցուցադրված է հին Վեհարանի Կաթողիկոսական թանգարանում:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—

Յի Քրիստոսի ծառայ տէր Իսրայէլ Կաթուղիկոս Աղուանից, փոխանորդ Գրիգորիսի սուրբ Հրային թոռին Մեծի Լուսաւորչին Հայոց (կարմիր թանաքով) և Աղուանից, և Պտրիրգ Առաքելական Աթ(ո)ռոյս սրբոյ Եղիշէի Առքլոյն:

Յորմէ ժամանեալ հաւատ թուղթ օրհնուն և նամակ պահպանուն շնորհք Առաքելական և Աստային բազմապատիկ օրհնուին ե նախախնամական գթութիւն, իջանէ և ծաւալեսցի ի վր սիրելի և հոգեւոր որդւոյդ իմոյ, Պրն Ամբակումիդ (կարմիր), որ ես որդի հոգելոյս Պրն. Փիլիպէկին, և Աստուշէն տանդ ե բնակուեդ, զարմից և գաւակաց քոց, որդւոց ե տստերաց քոց, Ազգաց և ընդանեաց քոց, սիրելի ե բարեկամաց քոց, յորս թերկրանօք յոյժ ի ար խնդալ միշտ Ամէն:

Շնորհք ընդ քեզ, և երկնաւոր խաղղութիւն և օրհնութիւն այ Հօրէ Ամենակալէ և ի տէ մերմէ Յէ Քէ և ի սրբոյ (և ի սրբոյ) Հոգւոյն, կենարարէ, և Առատաձաւալ տրգնտուէ և յամենազօր թերրէ ի վր եղիջցէ և հանգիցէ, ակեսցէ և բնակեսցի առ քեզ, ի հոգիս և ի մարմինս քոյ յաբաժամու Ամէն:

Եւ ընդ սիրալրական, և օրհնամատոյց, թղթոյս ծանուցումն, լիցի ճշմրիտ հրզտ և հաւատարիմ, հոգեւոր զաւակ մօրս հաւատոյ սրոյ Աթոյս, զի յայտնի լիցի հրամանաց քոց, մեր զսրպիսութիւս, զի յորժամ լուսաւորգի հայրն քո, և մեր մերձ ի մահ եղև որ գնայ, գոչողն վերին: Յաղագս որոյ, ժողվեցան սու նա Է (7) մաճալիս մէլիքներն հանդերձ յառաջնորդովք, վրդպովք, քահանայիւք, իշխանովք, առ բանակալն Գանջու քաղքիս, զաղաղակ բարձին ասելով ծերունազարդ Հրայտն մեր հանդերձեալ է մահուամբ փոխիլ առ Ած, և մեզ չէ պրտ մնալ առանց Հրայտի, և բանակալն իւր վէզիրն առքց առ հաւն մեր և ասաց որքան կենդանի ես քոյ ձեռօքդ մէկն օծիր փոխանակ քոյ զի կտակ մահուն հաստատուն լիցի ըստ առաքելոյ բանին, զի մի ոմանք Պօղոսեան լինին և միապօղոսեան, սակս որոյ լուսաւորգին մեր հաւանեալ բանիցն վերոյ գրեալ արանց ոմանս ար ժողվեաց Կուր գետոյն յայսմ կողմանէ սմ արանց, կնքով կնքեալ, թէ Հայոց և թէ տաճկաց զամ մանսարն ձեռնէւսծ և մեք սանմեղ գոլով ոչ գիտէաք թէ ում վերսյ պիտի հանգչի սարսափելի կարգս այս: Այլ ինչ երկարեմ վերջապէս բերին առ մեղաւորս հանգուցին, և ոչ ունելով մեր կամս բնաւին, կամա և ակամայ եղև յեր(կն)ի հաւանութրն, յե տայնորիկ լսեց ինք որ խաչեանցիք գնացին Էջմիածին, որ Կաթղկոս լինին, Էջմիածնայ, Կաթղկոսն բազում անիծիւր և նզովիւր հետ էր դրեցել ամօթալից, իրր թէ որովհետև հարիւր Ի (120) ամեայ սր Հրայտն Ներսէս իր ձեռօքն մէկն օծեալ է փոխանորդ իւր, ընդունելի է մեզ և ամ աշխարհի, անընդունակ էր դաք. և անիծեալ ամ եկեղեցեայց, և կանոնաց, որոց հարցն նախնեաց, չէ պրտ այդպիսի երկչողութիւն զոր խորհեալ էք, ապա. նք ոչ ունկն դնելով Հրայտին Էջմիածնայ, այլ եկեալ իւրեանց կամօքն, օծվել կաթղկոս, և աղմանկք ձգել այս մէջս, յետու այս եղև, որ բոլոր ալանաց, յերկիրն և Ծամախու քաղքին եղեալ ժողովրդն թաղթ էին գրել առ մեզ, և հրաւիրեալ իբր թէ որովհետև հորընձայ Հրայտեւ, պրտիս Ցաւանդ խոնարհիլ և գալ յերկիրս մեր օրհնել, և մեք ըստ բանից հոցին յարուցեալ գնացինք Ծամախի քաղքն, տեսանք զհանկանարքն մեր եկին իրր թէ զիւրեանց խօսքն յաւուշ ացուցանեն, որ ասորէնութիւն են գործեալ մեզս, այլ ողորմութրն Այ և աղօթիւքն հրզտոյ մերոց յաղթեցինք զնայ, ե բրդքացիքն, բազում անարգանօք դուրս արին զնա, որ կտոոր միոյ հացի արժանի չի համարեցան ամօթալից, յետս դարձուցին, զնա գնաց իւր տեղն, ապա վերջապս այսպէս եղև մեր մեղաւորս գամբ առ տէրութիւնդ ձեր, որ լինիցիք մի հօտ և մի հովիւ: Ասրս այն եղև որ Ծամախու յոջնրդ եղբայր Սահակ (կարմիր) վրդպտն մեր, և հայր Յովհաննէս Աղայն, քահանայք և ժողովրդն ամ, և Պաքուեցի սիրելի Հայր մեր Պրն Եղիազարն, և բոլոր ալանաց երկրին իշխանքն ժողվեցան առ մեզ և ասացին թէ մեր մեք սրբազան Վեհին արարեալ կտակն չեմք կարել պատառել և սնալ ի ներքոյ նզովից, զի զոր ինչ Այ հաստատել հնզտ եմք նր հրամանացն մահու չափ, և մահու կեանք ևս առաւել նր պսակ Հրայտիդ մերոյ, զի ոչ ոք գիտեմք և ոչ ոք ճանաչեմք, զատ ի հրամանաց քոց. ապա, այն եղև որ այլ պտշճ չի տեսան մեր գալն առ ձեզ, վս սատանամանեաց ժամանակին, այլ առացին մեք կու գրեմք Աշտարխան առ սաագաւգոն եղբարցն թէ ով ոք զծերունազարդ Հրայտն մեր Տն Ներսէս ընդրեսդ և օծեալ նայ է մեզ ընդունելի Հրայտ., նմայ պրտիմք հնզդիլ և ծառայիլ, և դու սիրելիդ մեր ճշմրտ հրզտ և հաւատարիմ որդի տն Ներսէսի լուսընկալ Հրայտին, պրտիս այժմայս կրկին հաստատիլ զանէրն զոր ունէիր յոջ առ լուսաւորգի հասն մեր, վի մի մնասցինս արդաքոյ կենդանի օրհնուն նորին, և թէ պտ ինքն փոխեալ է աստի այլ օրհնութիւն գայ, ի վր աշխարհի, մանաւանդ թէ հաւատիմ որդւոց և ճըշմարիտ սիրելիաց իւրոց. պրտիս և դու օրհնութիւն նորին ժառանգիլ ազգօք և ընդանեօք և ամ բարեկամօք աստ մարմնով և ի հնդերձելն հոգւով. Ամէն: Գրցւ թուղթս օրհնուն հազար երկու հարիւր ԺԳ (1764 թ.—Ն. Մ.) թուիս հայոց յունվարի ամսոյ ԺԳ (13) առ դրան Վեհարանիս. 1764:

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կոնդակի վերևի մասի կենտրոնում գրված է

թոչնագիր մի տառ «Լ», որի ներքևում կա կոնդակի ձևի նշան՝ Իսրայել կաթողիկոսի կարմիր փոքրիկ կնիքը, 2×1.8 սմ. չափերով: Վրան կապ գրերով գրված է. Ինանյալը.)

Թ. 1ա.— Իսրայէլ Կաթուղիկոս
ԻՄՐԻ (1763 թ.— Ն. Մ.):

№ 668
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Թերթերը՝ 36:— Պրակները՝ 5, յուրաքանչյուրը տարբեր քանակությամբ թղթերից բաղկացած:— Մեծությունը՝ 30.8×22.2×0.8 սմ.:— Կազմը՝ սկզբում չի եղել, բայց 1983 թ. օգոստոսին կազմված է՝ կապույտ լաթակազմ ատվաքաթուղթ:— Պահպանակները՝ սկզբում կա մի թերթ մաշված և դեղնած նեապոլիտանական թուղթ, որի վրա մատիտով մի պատմվածք է գրված: Նոր կազմի հետ սկզբում և վերջում մեկական ապիտակ հատ թուղթ է ավելացված:— Վիճակը՝ շատ վատ է, միջից շատ պակասավոր թղթեր կան: Հեղինակի համարակալման թվերը նկատի առնելով հետևյալ էջերը պակասում են՝ 26—31, 38—45, 70—79, 84—85, 98—99, որով ընդամենը 27 էջ պակասում է սկզբնական ձեռագրից:— Գրությունը՝ միապույն:— Գատարկ թղթերը՝ 36բ:— Տողերը՝ 31: —Գծումները՝ թուղթն ինքնին գծավոր է:— Գիրը՝ շեղագիր:— Զարդագրություն՝ չունի:— Գրիչը և պատվիրատուն՝ Վահան Ավագյան Վաղարշապատցի:— Ժամանակը՝ 1929 թ.:— Վայրը՝ Վաղարշապատ (այժմ Էջմիածին):— Ծանոթագրություն՝ սույն ձեռագիրն ստացվել է Մայր Աթոռի արխիվից 4 օգոստոսի 1983 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագիրն ամբողջությամբ պարունակում է գրչի ձեռնական բանաստեղծությունները, որոնց վերնագրերը տրվում են ստորև).

Թ. 3ա.— Իմ պահանջը (7—1—29):
Թ. 3բ.— Գարնան տեսքը (17—1—29):
Թ. 4ա.— Բնության հրաշալիքը (10—2—29):
Թ. 4բ.— Քաղցած ենք (Չին գյուղացու յերգը):
Թ. 5ա.— Միսիթարություն (20—2—29):
Թ. 5բ.— Սարի գլխին (25—10—929):
Թ. 6ա.— Կարկուտ (26—10—29):
Թ. 6բ.— Ծովի վրա (1—10—929):
Թ. 7ա.— Աշուն (10—11—29):
Թ. 7բ.— Զմեռ (29—11—29):
Թ. 8ա.— Արի գարուն (29—11—29):
Թ. 8բ.— Ան քնարս (7—12—29):
Թ. 9ա.— Հե՞յ ջան սարեր (3—4—929):
Ախ թե նորից ... (20—4—929):
Թ. 9բ.— Զարթուրանք (13—1—929):
Թ. 10ա.— Ավերակին (25—2—929):
Թ. 10բ.— Կուզեի լինել (3—2—929):
Թ. 11ա.— Քեզ տալու ել վոչինչ չունիմ (9—4—929):
Վեր կաց, գյուղացի (2—5—929):
Թ. 11բ.— Գյուղացուն (8—4—929):
Թ. 12ա.— Ա՜յ ջա՜ն անոթով ... (2—5—929):
Թ. 12բ.— Առաջինը:
Թ. 13ա.— Ո՞վ և ի՞նչ կա ստեղի (4—5—929):
Թ. 13բ.— Ծերանու խրատը (7—2—929):
Թ. 14ա.— Ցերբ տխուր ժամին (29—8—29):
Թ. 14բ.— Նախանձում եմ (9—3—929):
Սիրում եմ (5—5—29):
Թ. 15ա.— Գյուղիս (30—11—29):
Թ. 15բ.— Մանկանը (12—12—29):
Թ. 16ա.— Խրատ-հանելուկ (27—11—29):
Թ. 18ա.— Ցեկ, հեյ անջիգյար (7—7—929):
Հե՞յ բարձր սարեր (1—8—929):
Թ. 18բ.— Միթե՞ չգիտես (14—3—929):
Թ. 19ա.—Լասնիակ գիշեր (3—23—929):
Թ. 19բ.— Դու կուրացել ես ... (3—8—29):
Թ. 20ա.— Տարիքավոր աղջկա վիշտը (1—5—929):
Թ. 20բ.— Արի յար (4—5—929):
Թ. 21ա.— Քրդուհու յերգը (7—8—29):
Թ. 21բ.—Ցերբ յես ուզեցի լսել չկերգել (25—10—929):
Այ դու աղջի (4—4—929):
Թ. 22ա.— Սոխակին (4—9—29):
Թ. 22բ.— Սիրո գերի (26—11—29):
Թ. 23ա.— Ա՜խ տվեք ինձ (6—12—29):
» (6—12—29):
Թ. 23բ.— Սիրո նշան (12—12—29):
Հե՞յ զով գիշեր (15—12—29):
Թ. 24ա.— Կինը (23—12—29):
Թ. 25ա.— Վանուշն ու Մանուշը (ասասպել):
Թ. 28ա.— Տաղեր:
Թ. 30ա.— Իմ գրիչին (3—1—29):
Թ. 30բ.— Ցերգչին (15—1—929):
Թ. 31ա.— Մի լար (7—4—25):
Կա՞ց, ես ել հասնեմ (11—10—29):
Թ. 31բ.— Շիրիմի վրա (9—8—29):
Թ. 32բ.— Վիրավոր զինվորի յերգը (5—3—929):
Թ. 33ա.— Անբաղտի իղձը (8—8—928):
Վշտի զոնը (3—3—29):
Թ. 33բ.— Ընկածի խոսքը (4—1—929):
Թ. 34ա.— Հույսը (4—9—28):
Թ. 34բ.— Գնաց հետևից (10—7—928):
Թ. 35ա.— Դու չգիտես (25—10—929):
Ցեռ մնակ յեմ (12—12—29):
Թ. 35բ.— Զորի ուրվականը (6—4—29):
Թ. 36ա.— Գետակին (25—12—29):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— Վահան Ավագյան
Աշխատասիրություններ
1929 թիվ
Վաղարշապատ:
Թ. 2ա.—Ցերկու խոսք.

Սույն գրքույկում զետեղված, առաջին մասով, «Բանաստեղծություններ», յերկրորդ, «Սիրային աշխարհ», յերրորդ, «Վիշտ և արցունք» և չորրորդ

«Պատմվածքներ» աշխատությունով, նպատակ ունի հայտնելու հարգելի ընթերցողներին, վոր դոցա յուրաքանչյուր տող և բառերի մեջ պարունակվող իմաստ և բովանդակությունը, աշխատասիրողիս առարկա դյանքից յելնող և ապրումների մոմենտների ազդեցության ու թելադրանքի, ներքո բղխող երամադրությունների արտյանքների արտահայտություններ են:

Վերջվեցնելուց այդ, նմանե և առնասարակ նվիրաբերված բոլոր աշխատությունների բովանդակից լինելու հաշող դասավորման և խմբագրման հետ անպայմանորեն կապված և նպատակում են հեղինակի կրթության աստիճանը, փորձառությունը և ունեցած եներգիայի լարվածությունը, ու գրականական ոճանդակությունը, ուստի յես գրկված լինելով բոլոր տեսակի այդ հարմարություններից, տարրական կրթությունով, մի կողմից, աշխատելով տնտեսական գոյություն պահպանելու ֆրոնտում, և մյուս կողմից, աշխատանքից ավելացած ժամերը ոգտագործելով, հաղիվ եմ կարողացել այս աշխատությունը նվիրել:

Աշխատությանս մեջ, անկասկածորեն կարող են տեղ ունեցած լինել դասավորման, դասերի և բառերի սխալ և վրիպումներ, վորի համար խնդրում եմ հարգելի ընթերցողներից, նկատի ունենալ դոցա (թ. 2բ) մեջ նշված հանգամանքից անկախ պատճառները և ներողամիտ լինել:

Ընթերցողների ամենի բառ խրախուսանքը անշըշտորեն աշխուժություն ու յեռանդ պիտի ներշնչե իմ ապագա աշխատություններիս մեջ:

Վ. Ավագյան:

Թ. 17ա.— Վահան Ավագյան
Սիրային աշխարհ:

Թ. 17բ.— Սերը, յերկնայրանի ցողած և մի սուր ե, վորը խոցվելով ամենամեղավորների սրտերը, աննկարագրելի կերպով մերձեցնում ե միմյանց, բայց նրա մեջ կա և թույն և ատելություն, հենց վոր ցողը կոտրվեց, անմիջապես սերը կգոլորշիանա և ծայրերում ուժեղ թափով կսկսի գործել ատելությունը:

Վ. Ավագյան

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Թ. 1ա և թ. 1բ, ինչպես նաև սկզբի պահպանակի երկու էջերում մատիտով գրված է մի պատմություն):

Թ. 3ա.— Արթիկի շրջան, գյո(ւ)ղ Ժայժնջնյ
Կորյան Սամոն:

Թթ. 16բ—17բ.— (Մատիտով գրված է մի վեպ)
Վեպ 1918 թ.
Դատապարտվածը:

Թ. 22ա.— (Մատիտով մի գրություն կա, որ վերնագրված է)
Քաղցր կարոտի մեջ:

Թ. 23բ.— (Մատիտով հետևյալ գրությունը կա)
Ճամբա յեմ ընկել
Ճամբա յեմ ընկել մենակ
Չունեմ ինձ մեկ ընկեր:

Թթ. 25բ—26բ. 27բ.— (Մատիտով գրված և ապա ջնջված մի շարք գրություններ կան).

Թ. 33ա.— Արտագրել (վերանայել):

Թ. 34բ.— (Վերանայել արտագրել):

Թ. 35բ.— (Վերանայել արտագրել):

## № 669

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

Թերթերը՝ 57:— Պրակները՝ 5, յուրաքանչյուրը տարբեր քանակությամբ թղթերից բաղկացած:— Մեծությունը՝ 30.3×22.1×1 սմ.:— Նյութը՝ դեղնած և կեղտոտված հասարակ թուղթ:— Կազմը՝ սկզբում չի եղել, բայց 1983 թ. օգոստոսին կազմված է՝ կապույտ լաթակազմ ստվարաթուղթ:— Պահպանակները՝ սկզբում չի եղել, բայց նոր կազմի հետ սկզբում և վերջում մեկական սպիտակ հատ թուղթ է ավելացված:— Վիճակը՝ շատ վատ է, միջից շատ պակասավոր թղթեր կան: Հեղինակի համարակալման թվերը նկատի առնելով հետևյալ էջերը պակասում են՝ 5—10, 27—28, 33—34, 39—46, 49—50, 55—56, 59—64, 67—70, 73—76, 79—107, 118—127, 136—153, 164—165 և 168—175, որով ընդամենը 103 էջ պակասում է սկզբնական ձեռագրից:— Գրությունը՝ միասյուն:— Գատարկ թղթերը՝ 13բ, 20ա—20բ, 27ա, 29բ, 40բ, 41բ և 46բ:— Տողերը՝ 31:— Գծումները՝ թուղթն ինքնին գծավոր է:— Գիրը՝ շեղագիր:— Զարդագրություն՝ չունի:— Գրիչը և պատվիրատուն՝ Վահան Ավագյան Վաղարշապատցի:— Ժամանակը՝ 1929—35 թթ.:— Վայրը՝ Վաղարշապատ (այժմ Էջմիածին):— Ծանոթագրություն՝ սույն ձեռագիրն ստացվել է Մայր Աթոռի արխիվից 4 օգոստոսի 1983 թ.:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագիրն ամբողջությամբ պարունակում է գրչի հեղանակած բանաստեղծություններն և պատմվածքները, որոնց վերնագրերը տրվում են ստորև)

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Սարի գլխին (25—10—31):

Թ. 1բ.— Ծովի վրա (1—10—31):

Թ. 2ա.— Տվածս յեկավ առջևս (28—12—31):

Թ. 2բ.— Մայիս (5—4—32):

Թ. 3ա.— Սեպտեմբեր (3—2—31):

Թ. 4բ.— Ծերունու խրատը (5—3—33):

Թ. 5ա.— Լիճը (4—3—30):

Թ. 5բ.—Սարի գլխին ամպը նստեց (25—5—30):

Թ. 6ա.— Հե՞յ գյուղացի (27—5—30):

Թ. 6բ.— Դաշտում (7—4—31):

Թ. 7ա.— Վտակը (10—3—32):

Թ. 7բ.— Գիշերը գյուղում (3—4—34):

Թ. 8ա.— Ով աշխատի, նա կուտի:

Թ. 9ա.— Առաջինը (20—7—33):

Թ. 9բ.— Կարկուտ (15—7—31):

Թ. 10ա.— Փոթորիկը (17—3—33):
Թ. 10բ.— Ինչո՞ւ լռեմ (1—4—30):
Թ. 11ա.— Մանկությունը (12—12—32):
Թ. 11բ.— Նախանձում եմ (27—6—33):
Թ. 12ա.— Ցեռ սիրում եմ:
Կուզեի լինել (30—4—32):
Թ. 12բ.— Ախ թե նորից (20—4—934):
Թ. 13ա.— Արի գարուն (30—2—32):
Թ. 13բ.— Ա՜յ ջան անձրև (10—6—32):
Թ. 14ա.— Ավերակին (25—2—34):
Թ. 15ա.— Կինը (23—11—32):
Թ. 15բ.— Ցե՞ր ընկեր ես (3—1—34):
Թ. 16ա.— Հա՜յ դու, ծերուկ (31—12—34):
Թ. 17ա.— Հանելուկ:
Թ. 17բ.— Ո՞վ և ի՞նչն է ստեղի:
Թ. 18ա.— Զրվեժի մոտ (31—3—33):
Թ. 19ա.— Ես քնարս (15—12—35):
Թ. 19բ.— Ցերը տխուր ժամիս (29—8—35):
Թ. 21ա.— Լուսնիակ գիշեր (18—3—33):
Թ. 21բ.— Միթե՞ չգիտես (14—3—33):
Թ. 22ա.— Ցերը ես ուզեցի, լռել չկարցվ... (20—10—32):
Թ. 22բ.— Սիրտ գերին (26—11—32):
Թ. 23ա.— Միթե՞ չես տեսնում, լսում և զգում (3—8—34):
Թող ... (6—12—33):
Թ. 23բ.— Կնոջ նամակը պանդուխտ ամուսնուն (4—5—33):
Թ. 24ա.— Հա՜յ բարձր ասրեր:
Հա՜յ զով գիշեր (15—12—31):
Թ. 24բ.— Կարոտ եմ յարոտ (20—12—33):
Թ. 25ա.— Ցեռ երված եմ, ես գերված եմ (28—12—33):
Թ. 25բ.— Քրդուհոյ երգը:
Թ. 26ա.— Անվերնագիր (30—3—33):
Թ. 26բ.— Մի ձայն (8—11—32):
Թ. 27բ.— Տաղեր (7—7—32):
Թ. 30ա.— Ցերգչին (15—1—33):
Թ. 30բ.— Ախ ինչո՞ւ ես ... (24—12—35):
Թ. 31ա.— Դու չգիտես (20—10—35):
Ցեռ մենակ չեմ (12—12—33):
Թ. 31բ.— Գետակին (25—12—38):
Թ. 32ա.— Անբաղտի իղձը (8—8—32):
Թ. 32բ.— Վիրավորված գինվորի յերգը (5—3—33):
Թ. 33բ.— Շիրիմի վրա (9—8—84):
Թ. 34բ.— Մի լար (7—4—82):
Թ. 35ա.— Վշտի զոհը (8—3—34):
Թ. 35բ.— Հույսը (14—9—32):
Գնաց հեռուից:
Թ. 36ա.— Վանուշն ու Մանուշը (առասպել)—(13—4—35):

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Թ. 42ա.— Գիժ Հովակ (3—4—929):
Թ. 47ա.— Անվեղ վորս·
Թ. 52.ա— Գիժ Հովակ (13—4—35):

ՀԻԾԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 41ա.— Վասիան Ավագյան
Պատմվածքներ:

№ 670
ՈՏԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Թերթերը՝ 29:— Պրակները՝ 3, անկանոն ծավալով:— Մեծությունը՝ 21.7×16.8×0.4 սմ.:— Նյութը՝ դեղնած հասարակ թուղթ:— Կազմը՝ սկզբում չի եղել, բայց 1983 թ. օգոստոսին կազմված է՝ կապույտ լաթակազմ ստվարաթուղթ:— Պահպանակները՝ սկզբում չի եղել, բայց նոր կազմի հետ սկզբում և վերջում մեկական ապիտակ հատ թաղթ է ավելացված:— Վիճակը՝ բավարար:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ 8բ և 16ա—17բ:— Տողերը՝ 18:— Գծումները՝ թուղթն ինքնին գծավոր է թթ. 1—8, մատիտով քաշված է թթ. 18—24, իսկ մնացած թերթերը (թթ. 9—17 և 25—29) գծավոր չեն:— Գիրը՝ շեղագիր:— Զարդագրություն՝ ձեռագիրն ունի շատ պրիմիտիվ երկու նկարներ, որոնց հեղինակը նույն ինքն գրիչն է: Թ. 1ա-ում կա մի վորոշ ծաղկամանի նկար, մեջն էլ մի ծաղկեփունջ, իսկ թ. 4ա-ում նկարված է մի սիրտ, որի մեջ մտած է վորոշ նետը:— Գրիչը և Ծաղկողը՝ Դագիկ Մուրադյան (1901—22 թթ.), որդին Ներքին Զեյվագի (Էջմիածնի շրջան) Նահապետ բահանա Մուրադյանի:— Ժամանակը՝ 1921—22 թթ.:— Վայրը՝ Վաղարշապատ և մի շարք այլ բաղաքներ (Աշտարակ, Երևան, Ղարաքիլիսա):— Ծանոթագրություն՝ սույն ձեռագիրն ստացվել է Մայր Աթոռի արխիվից 4 օգոստոսի 1988 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Սույն ձեռագիրը պարունակում է վաղամեռիկ հեղինակի գրած ուսանավորները, որոնց վերնագրերը, գրչության վայրն ու թվականը տրվում են ստորև: Բոլոր ուսանավորները ստորագրված են այսպես «Գ. Մուրադեան»):

Թ. 1ա.— Սև աչեր (Վաղարշապատ, 10—11—1921 թ.):
Թ. 1բ.— » ( » 6—8—1921 թ.):
Թ. 2բ.— » (Էջմիածին, 28—8—1921 թ.):
Թ. 3բ.— »
Թ. 4ա.— Տխուր ժամերին (Աշտարակ, 24—7—1921 թ.):
Թ. 4բ.— Ախ շուտ անցան ( » 20—7—1921 թ.):
Թ. 5ա.— Կարմիր դրոշը (Վաղարշապատ, 1—8—1921 թ.):
Թ. 6ա.— Մութն ընկավ (Էջմիածին, 31—7—1921 թ.):
Թ. 6բ.— Մենակ նստա (15—1—1922 թ.):
Թ. 7ա.— » (22—1—1922 թ.):
Թ. 7բ.— Ընկերիս (Երևան, 29—1—1922 թ.):
Թ. 8ա.— Սիրտ երգերը (3—2—1922 թ.):

Թ. 9ա.— Նայիր լուսնին (Աշտարակ, 26—7—1921 թ.):
Թ. 9բ.— » ( » 28—7—1921 թ.):
Թ. 10ա.— Սև աչերով (Ղարաքիլիսա, 19—3—1922 թ.):
Թ. 11ա.— Նրան ( » 20—4—1922 թ.):
Թ. 11բ.— » ( » 18—3—1922 թ.):
Թ. 12ա.— Ցուշեր ( » 22—4—1922 թ.):
Թ. 12բ.— Համապատասխան Գուրեանի գրածին (26—5—1922 թ.):
Թ. 13ա.— Ապրել արժէ (5—6—1922 թ.):
Թ. 13բ.— Սիրուն աղջիկ (8—6—1922 թ.):
Թ. 14ա.— Սիրուն աղջիկ (10—6—1922 թ.):
Թ. 14բ.— Եթէ մնան (12—6—1922 թ.):
Թ. 15ա.— Երջանիկ օրեր (12—6—1922 թ.):
Թ. 15բ.— Բարև նորան (25—6—1922 թ.):

Պատճէն

Թթ. 18ա—24ա.— Իմ վերջին խոսքը ընկերներիս, Ծնողներիս և թանկագին Արուսեակին:
(12 էջը գրված է արձակ):

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.— Գ. Մուրադեան
Գրեցի 1921 թ. 10 Նոեմբերի
Վաղարշապատ:
(այսպես գրված է բոլոր ոտանավորների ներքևում, փոխելով միայն թվականն ու վայրը):
Թ. 11ա.— Գիշերվա 12 ժամին:
Թ. 24ա.— (Արձակ գրության ներքևում գրված է այսպես)

Գ. Մուրադյան
1922 թի Սեպտեմբերի 5-ին
իսկականի յետ ճիշտ է:

Տապանագիր

Կմեռնի մաքիս մեքենան, բայց ես կապրեմ նորից
Ուրիշների մէջ և այդպես անուրջ:
Գ. Մուրադյան:

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Թթ. 24բ—29բ գրված են վաղամեռիկ հեղինակի հայր՝ Զեյվացի Նահապետ քահանա (հետագայում վարդապետ) Մուրադյանի կողմից):
Թ. 24բ.— Վաղաթառամ
Գագիկ Մուրատեանց
Ծնաւ 1901 թի Մայիսի 15-ին.
Վախճանեալ 1922 թի Հոկտեմբերի 5-ին:

Տապանագիր

Կմեռնի մտքի մեքենան.
Բայց ես նորից կապրեմ.
Ուրիշների մեջ, և
Այդպես անուրջ:
Թ. 25ա.— (Ոտանավորներ գրված Նահապետ քահանա Մուրադյանի կողմից):
Կար մի ժամանակ:
Օրեր առաջ (1—11—1922 թ.):
Թ. 25բ.— Լացէք ինձ հետ (5—12—1922 թ.):
Թ. 26ա.— Մեր պարտիզում ուր կորաւ մեր ոիլբալը (5—12—1922 թ.):
Թ. 26բ.—Ունայն աշխատանք (10—12—1922 թ.):
Թ. 27ա.— Իմ կնոջը (20—12—1922 թ.):
Թ. 27բ.— Կորցրած գունձս (14—3—1923 թ.):
Թ. 28ա.— Բանտում 1931 թիվ:
Թ. 28բ.— (Երկու էջ արձակ գրություն)
Իմ հուշերից.
1953 թ. Հոկտեմբերի 5-ին իմ որդի վաղաթառամ Գագիկ Մուրատեանի 31-րդ մահվան տարեդարձին.
Իմ անմոռանալի և
հանգուցեալ կենակցիս:
Թ. 29ա.— 1953 թ. Հոկտեմբերի 5-ը.
Գեղարտ վանքում:
Նահապետ վարդապետ:

(Շարունակելի)